428

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«17» 01 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0006-23

Ձեռնարկողը՝ ***«ԱԱԱ ՇԻՆ» ՍՊԸ***
ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Սասունցի Դավիթ 6/25

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոցի 13/1 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան, Դրոյի փողոց 13/1 հասցե

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0006-23

«17» 01 2023թ.

«ԱԱԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոց 13/1 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱԱԱ ՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Դրոյի փողոց 13/1 հասցեում

Ներածական մաս. «ԱԱԱ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոց 13/1 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 11032022-01-0023, 0.54953 հա /ծածկագիրը՝ 01-012-0305-0019/, Երևանի քաղաքապետի 31.10.2022թ. N 3805-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարանի կողմից 11.11.2022թ. տրված N 01/18-07/2-3805-Ա նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/, Երևանի քաղաքապետարանի կողմից 06.05.2022թ. տրված N 01/18-Դ-4068-23 քանդման թույլտվությունը: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հեղատեսքը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920 Ն որոշման 24-րդ կետի համաձայն փոփոխվում է բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախագծով նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Այն բաղկացած է 4 մասնաշենքերից /Ա, Բ, Գ և Դ/, որոնք միասին կազմում են մեկ ճարտարապետական լուծում:

Վերգետյա երկու փողոցներին հարող հատվածներում համալիրի հարկայնությունը կազմում է 12 հարկանի՝ երկու շենք, 1 հատ մեկ հարկանի և 1 հատ 18 հարկանի շենքեր՝ 12 երկու փողոցների խաչմերուկից մոտ 48 մ. հետ նահանջով տեղադրված:

Տեղանքի ռելյեֆի առանձնահատկությունից ելնելով ստորգետնյա և կիսաստորգետնյա հարկերում առաջացել են 3 հարկեր որոնք հանդիսանում են հիմնականում ավտոհանգրվաններ և տեխնիկական սպասարկման և հակահրդեհային միջոցառումների համար նախատեսված սենյակներ և սենքեր: Առաջին հարկը հիմնականում հանդիսանալու է ոչ բնակելի տարածքներ, բացառությամբ /Դ/ մասնաշենքի առաջին հարկից, որտեղ ռելյեֆի թեքությունը հնարավորություն է ընձեռնել ստանալ ևս մեկ բնակելի հարկ: Համալիրի

ստորգետնյա հարկերի մուտքերը կազմակերպված է բակային տարածքից ապահովելով -3.90 և -7.50 նիշերում երկուական մուտքեր, իսկ -10.80 նիշ մուտքը կազմակերպված է 7.50 նիշից համապատասխան թեքուղու միջոցով:

Շենքերի շքամուտքերը նույնպես կազմակերպված է բակային հատվածներում ապահովելով յուրաքանչյուր շենքի համար առանձին մուտքեր և հակահրդեհային պահանջներ:

Բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվելու են թեքահարթակներ:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

1. Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 5495.3մ²(40%):
2. Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 2198մ²(40%):
3. Սալվածքներ և անջրանցիկ տարածք՝ 1099մ²(20%):
4. Կանաչապատման մակերեսը 2198.3մ²(40%):
5. Բնակարանների քանակը՝ 221 հատ:
6. Ավտոկայանատեղիներ՝ - 3.90, -7.50 և -10.80 նիշերում՝ յուրաքանչյուրում առկա են 2100մ² մակերեսով ավտոկայանատեղիներ՝ և համապատասխանաբար 51, 53 և 55 հատ ավտոկայանատեղիներ, ընդհանուր՝ 159 ավտոկայանատեղի:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրում են ճեղքավորվածությամբ: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն տարածքում բացակայում են:

Համաձայն II-5.02.2006 ՀՀՇՆ-ի շրջանը և տարածքը մտնում են 3-րդ սեյսմիկ գոտու մեջ: Տարածքի հաշվարկային սեյսմիկությունը սպասվող առավելագույն արագացման գործակցի կկազմի 0,44g:

Նախատեսվող գործունեության տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Նախնական ուսումնասիրությունների և գրականության տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինությունների հեռավորությունները մոտակա շենք-շինություններից պատկերված են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում /այսուհետ՝ Հայտ/ ներկայացված իրադրության հատակագիծ սխեմայում:

Շինարարությունը կատարվելու է երկու փուլով: Առաջին փուլի տևողությունը սկսման օրվանից կազմում է 20 ամիս մեկ միավոր մասի շինարարության համար: Երկրորդ փուլի վերգետնյա մասի կառուցումը տևելու է 10 ամիս, շինարարական մրցույթային փաստաթղթերի եռամսյա նախապատրաստական և ավարտական փաստաթղթերի ձևակերպման 1 ամսյա փուլերը՝ 4 ամիս:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 34 ամիս՝ 2 տարի 9 ամիս:

02543163 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Հետիոտնի անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու է վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ:

Շինաշխատանքները կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են հետևյալ շինարարական մեքենաները և մեխանիզմները.

Թրթուրավոր կռունկ-2 հատ,

- Բեռնատար ինքնաթափ մեքենա- 4 հատ, 20տ տարողության
- Թրթուռավոր էքսկավատոր- 1 հատ
- Ամբարձիչ- 1 հատ
- Տրակտոր-1 հատ
- Բետոնախառնիչ -2 հատ
- Բետոնամղիչ-1 հատ
- Այլ մեխանիզմներ

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50-ից ոչ ավել թեքություն:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական նյութերից օգտագործվելու է՝ երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, ավազ, բազալտ, տուֆ, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, մետաղական կառուցվածքներ, ամրանային ձողեր, բարձրորակ երեսապատման սալիկներ, ապակի, բարձրորակ սվաղ և ներկ: Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել /օդափոխվող ֆասադ/ կոչվող համակարգով, որի արտաքին երեսապատող նյութը լինելու է տրավերտինից՝ քարե սրբատաշ սալիկներով, այն համադրելով մոխրագույն տուֆե սալիկների և դեկորատիվ ճակատային հարդարման հետ:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է գոյություն ունեցող ջրագծերը: Ջրցանի

համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսված հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հանույթի ծավալը կազմելու է 29498մ^3, որից 29197 մ^3 իրականացվելու է մեխանիզմով, 301մ^3 իրականացվելու է ձեռքի գործիքներով: Կատարվելու է գրունտների հետ լիցք՝ 6836 մ^3 ծավալով: Մնացած՝ 22662մ^3 ծավալի հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է աղբավայր՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը, բացակայում է:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կոշտ թափոններ է շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և մետաղական ջարդոնի մնացորդներ և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 180 մ^3 ծավալով, կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 12528 կգ/տարի, շահագործման փուլում՝ 318240 կգ/տարի:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում, ծառատնկման և սիզամարգերի միջոցով՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության կողմից հաստատված՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տնկվելու են մարգագետնային տեսակի դեկորատիվ բույսեր, մասնավորապես՝ սամշիտներ, ծաղկասածիլներ, միամյա և բազմամյա բույսեր, ինչպես նաև թույա տեսակի կանաչապատող տնկիներ:

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 12.08.2022թ. տրված N ՄՇ/24369 տեխնիկական պայմանի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մշակված ջրամիացման և ջրահեռացման նախագծման N 4223 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 07.09.2022թ. տրված N ՏՊ-ՃՀԱ-0.4/0558 տեխնիկական պայմանի: Համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով ԳԵ0130-ի 0,4 վահանից, 100ԿՎԱ պահանջվող հզորությամբ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարումը նախատեսված է իրականացնել համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 25.03.2022թ. տրված տեխնիկական պայմանի:

Ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը կազմելու է 155 օր: Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է բնակարաններում տաք ջրամատակարարման և ջեռուցման անհատական կաթսաներից: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպելինային խողովակներով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի օդափոխությունը կատարվելու է խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից՝ բնական օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:

COMMISSION OF EXPERTS

Շենքերի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղիներից իրականացվում է ծխահեռացում: Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր:

Նախագիծը կմշակվի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխան:

Շահագործման փուլում կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռացվում են գոյություն ունեցող քաղաքային կոյուղու ցանց:Կոյուղու կանգնակները նախատեսված են օդափոխության հորանների մեջ:Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային PVC խողովակներից ռետինե սեղմիչ օղակներով:

Ավտոկայանատեղիի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերը հեռանելու համար նախատեսված են հոսակներ՝ -10.80 նիշում: Նախատեսված է դրենաժային պոմպ՝ կուտակված ջրերը դուրս մղելու համար: Նախատեսվում է հեղեղատարի կառուցում 250մմ տրամաչափի խողովակաշարով, Դրոյի փողոցից դեպի Դ.Անհաղթ փողոց, այնուհետև միացվելու է գործող հեղեղատար կոլեկտորին:

Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. «Աղբահանության վճար վճարողների 20 հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» 360-Ն որոշմամբ սահմանված կարգով: Տեղադրվելու են 6 հատ 1*1,5 չափերի աղբամաններ:

Շինարարության ընթացքում կիրականացվի միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրն աղտոտումից, թունավոր արտանետումներից:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- շինհրապարակը ցանկապատվելու է մետաղաթիթեղյա վահանակային պատնեշով, բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման հարթակում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը,
- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1*1.5մ չափերի պարզարան,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,
- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,
- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,
- շինարարական աշխատանքները կատարվելու են սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառվելու են շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում:
2. Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական:
3. Վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով:
4. Իրականացվելու է շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով:
5. Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:
6. Պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը:
7. Ապահովվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը և կանաչապատ տարածքի համապատասխանությունը նախագծին:
8. Կատարվելու է կանաչ զանգվածի վիճակի՝ կպչողականության ուսումնասիրություն և ծառերի աճն ապահովվելու նպատակով մշտադիտարկում:
9. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 300,0 հազար դրամ, ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարարական կազմակերպության կողմից:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության

իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:

8. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱԱԱ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոց 13/1 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Նելլի Մովսիսյան